ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հուլիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

104
(2770)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՄ ԴԵՍՊԱՆԸ ԴԵՌ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինի հետ, որն ավարտում է իր դիվանագիտական կարիերան Հայաստանում եւ մյուս ամիս պետք է գնա Հայաստանից:

-Տիկին դեսպան, կամ Հայաստանում մի բան, որ ձեզ դուր չի եկել, որի հետ հաշտ չեք մինչ օրս: Ի՞նչ կառաջարկեք, ինչպե՞ս փոխել: Ձեր մոտ՝ Գերմանիայում, կարգուկանոնը առաջնային է:

-Մեքենաներ վարելու խնդիր ունենք: Ես կուզեի, որ ավելի դանդաղ վարեինք, հատկապես կուզեմ փոխվի ոստիկանական ավտոմեքենաների վարման ձեւը: Իմ երկրում այդ ազդանշաններով մեքենաները վարում են լրիվ այլ դեպքերում, դրանք օգտագործում են այլ նպատակներով: Քանի որ մենք աշխատում ենք ոստիկանական համակարգի բարելավման ուղղությամբ, իմ առաջարկը դա կլիներ: Անհնար է շատ հաճախ հասկանալը, թե նրանք իրենց բարձրախոսով ինչ են ասում մեքենայի միջից: Ես մտածում էի՝ խնդիրն իմ մեջ է, քանի որ հայերեն չեմ հասկանում, բայց հարցնում եմ մյուսներին, նրանք եւս չեն հասկանում:

-Որպես տուրիստ կգա՞ք Հայաստան Ձեր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո:

-Միանշանակ կվերադառնամ: Ես պետք է փոքր-ինչ դադար ունենամ եւ հաջորդող դեսպանին հնարավորություն տամ սովորելու աշխատանքին, բայց որոշակի ժամանակ անց միանշանակ կվերադառնամ Հայաստան:

Շարունակությունը՝ ArmLur.am-ի տեսանյութում:

⇨ էջ 5

Երեւանի ավագանու ընտրություններում իշխող ՔՊ-ն մասնակցելու է հին դեմքերով: Թեեւ դեռ որոշված են միայն առաջին 5 համարների անունները, բայց արդեն կարելի է պատկերացում կազմել, թե ինչ տեսք ունի նոր իշխանության հնացած ցուցակը: Արմեն Փամբուխչյանը՝ Փամբը, կլինի 2-րդ համարը: Նա 2001 - 2006 թվականներին սովորել է Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում եւ ծառայել է ՀՀ զինված ուժերում: Փամբուխչյանն այն երջանիկներից է, որը մինչ հեղափոխությունն աշխատել է բանկային համակարգում եւ 2018-ից նրա մոտ սկսվել է պաշտոնական առաջխաղացման շրջանը: Հունիսի 6-ին նշանակվել է ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ, հոկտեմբերին՝ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ: Դեկտեմբերի 9-ին կայացած ԱԺ ընտրություններում պատգամավոր է ընտրվել «Իմ քայլը» դաշինքի ցուցակով: 2020 թվականի սեպտեմբերի 24-ին նշանակվել է արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ, իսկ ապրիլի 12-ին՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար: Նրա՝ որպես նախարարի գործունեությունից ոչինչ չի հիշվում, սակայն «Սուրմալու»-ի ողբերգական պայթյունի օրերին Արմեն Փամբուխչյանն ի ցույց դրեց իր կառավարման անկարողությունը, երբ իր օգնականի հետ մաքուր, փայլուն կոշիկներով նկարվում էր պայթյունի ֆոնին այն դեպքում, երբ պայթյունից մեկ տարի անց՝ մինչ օրս, կա մեկ անհետացած մարմին «Սուրմալու»-ից: Մենք հերթով կանդրադառնանք իշխող ՔՊ-ի կազմած ընտրացուցակի ներկայացուցիչներին:

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ պաշտոնավարումը դադարեցված ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Տիգրան Պետրոսյանը հանրագիր է ներկայացրել ԲԴԽ անդամներին, որով առաջարկել է կարգապահական վարույթ հարուցել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի նկատմամբ վերջինիս կողմից դատավորի վարքագծի կանոնի խախտման, այն է՝ դատավորների կարգապահական վարույթների ընթացքում վարույթի կողմ հանդիսացող ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հետ առանձին հանդիպումներ ունենալու համար: Հիշեցնենք, որ ԲԴԽ շենքի մոտ գտնվող, ենթադրաբար Գ. Մինասյանին պատկանող սրճարանում այդպիսի մի հանդիպման փաստին ՋԼՄ-ներն արդեն անդրադարձել են, նույնիսկ հրապարակվել է հանդիպումներից մեկի տեսանյութը, հանդիպումների փաստն իր հարցազրույցում հաստատել է Գրիգոր Մինասյանը, իսկ Կարեն Անդրեասյանն էլ այն չի ժխտել: Այսինքն՝ ակնհայտորեն կա շահերի բախում: Ժողովուրդ օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել հանրագիրը ամբողջությամբ, որտեղ փաստարկված է, թե օրենքի ինչ կետեր է խախտել: Անդրեասյանը՝ իր ընկերոջը՝ նախարար Մինասյանին հանդիպելով: Ու հետաքրքիր է, թե ինչ որոշում կկայացնեն ԲԴԽ անդամները: Եթե նրանք չիրացնեն օրենքով իրենց վերապահված լիազորությունները եւ Կ. Անդրեասյանի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցեն, ապա դա կնշանակի, որ այսուհետ Հայաստանի Հանրապետությունում բոլոր դատավորները դատարանների շենքերի մերձակա հասարակական սննդի օբյեկտներում կարող են անարգել հանդիպել իրենց վարույթում գտնվող գործերով կողմերին եւ շփվել նրանց հետ, քննարկել գործի հանգամանքները: Տիգրան Պետրոսյանի կողմից ներկայացված հանրագիրը՝ ArmLur.am կայքում:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, նախկին հաղորդավար Լուսինե Բադալյանը՝ Լուլուն, ֆինանսական վիճակը բարելավել է: Նա 2022 թվականի վերջում 48 մլն դրամի վարկ է ունեցել, որը հիփոթեքով բնակարան ձեռք բերելու համար է նախատեսված, սակայն բուն հիփոթեքով ձեռք բերված բնակարանի մասին տեղեկություններ հայտարարագրում առկա չէ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արարատի մարզի Այնթափ համայնքում համատեղ սեփականության իրավունքով հողամաս ունի պատգամավորը եւ Աջափնյակ վարչական շրջամում էլ կրկին համատեղ իրավունքով բնակարան ունի՝ ձեռք բերված 2013 թվականին: ՔՊ-ական պատգամավորը մեքենա չունի: Լուսինե Բադալյանի հայտարարագրից տեղեկանում ենք, որ բանկային հաշիվներին առկա գումարը նվազել է՝ 456 հազարից դառնալով 198 հազար դրամ, սակայն ավելացել են կանխիկ դրամական միջոցները: Մասնավորապես, տարվա սկզբում նա ունեցել է 1500 դոլար, որը տարվա վերջում դարձել է 4 հազար դոլար, իսկ 2 մլն 600 հազար դրամն էլ դարձել է 3 մլն 500 հազար դրամ: Մեկ տարվա ընթացքում պատգամավորը վաստակել է 10 մլն դրամ, որից 8 մլն 320 հազար դրամը նրա աշխատավարձն է, իսկ 1 մլն 680 հազար դրամ էլ նա ստացել է Ֆինանսների նախարարությունից: Ինչի դիմաց է պատգամավորը Ֆինանսների նախարարությունից գումար ստացել, պարզ չէ. հայտարարագրում չի երեւում: Նշված է նաեւ, որ նա մեկ տարվա ընթացքում 6 մլն 600 հազար դրամ է ծախսել վարկը մարելու համար: Եւ անհասկանալի է մնում, թե այդ դեպքում ինչպես են նրա կանխիկ միջոցներն աճել:

ԶՐՈՒՅՑ

ԲՀԿ-Ն ԿՄԱՄՆԱԿՑԻ՞ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Միքայել Մանրիկյանի հետ՝ պարզելու համար, թե արդյոք իրենց կուսակցությունը մասնակցելու է սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին: Մեր զրուցակցից փորձել ենք պարզել, թե ով է այս պահին առաջադրված թեկնածուներից համարվում ֆավորիտ: Մանրիկյանը նշել է նաեւ, թե Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի առաջադրումից ինչ փոփոխություններ կարող են լինել ավագանու ընտրությունների ելքում:

-Պարոն Մանրիկյան, պաշտոնապես հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 17-ին տեղի կունենան ավագանու ընտրություններ, իրավիճակն էլ գնալով կթեժանա: Նախ՝ Դուք ի՞նչ դիրքորոշում ունեք, եւ արդյոք «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մասնակցություն ունենալո՞ւ է Երեւանի ավագանու ընտրություններին:

-Կուսակցությունում ակտիվ քննարկումները՝ պարոն Ծառուկյանի գլխավորությամբ, իհարկե, շարունակվում են: Պարոն Ծառուկյանը հանդիպում է տարածքային գրասենյակների ղեկավարների հետ, կուսակցության ակտիվի հետ, եւ մասնակցելու կամ չմասնակցելու հետ կապված առաջիկայում կլինի պաշտոնական հայտարարություն:

-Ինչի՞ շուրջ են նման երկար քննարկումները: Թեկնածուների՞ հետ է կապված, թե՞մրցակցության, կամ միգուցե կա այլ պատճա՞ռ:

-Ցանկացած ընտրության դեպքում՝ դա կլինի ՏԻՄ ընտրություն, թե համապետական ընտրություն, կուսակցությունը մոտենում է լրջագույն տեսանկյունից: Մենք չենք ուզում մասնակցել մասնակցելու համար, պետք է նաեւ քննարկումներ ունենանք, լսենք մեր թիմակից ընկերների բարձրաձայնած առաջարկները, մտահոգությունները, խնդիրները, նոր կայացնենք որոշում: Եթե մասնակցում ենք, պետք է ունենանք արդյունք: Այդ իսկ պատճառով ակտիվի հետ կատարվում են քննարկումներ, մնացածը մոտ ապագայում կհայտնենք:

-Ի՞նչ կարծիքներ կան՝ ընտրությունների ելքի հետ կապված: Կան մարդիկ, ովքեր կարծում են, որ ամեն բան արդեն որոշված է, եւ մենք ունենք արդեն քաղաքապետ՝ Տիգրան Ավինյանը: Ձեր կուսակցությունը ի՞նչ կարծիքներ է քննարկում:

-Թե՛ կուսակցության, թե՛ հանրության հետ շփվելիս, ընկերական շրջապատում այնպես չէ, որ միանշանակ համոզված են, որ արդեն ելքը որոշված է: Նախ պետք է հասկանալ՝ վերջնական ցուցակում ովքեր են ներառված, թե ովքեր են վերջնական թեկնածուները, որովհետեւ, ինչպես հասկացա, մեկ տասնյակից ավելի կուսակցություններ ու դաշինքներ են մասնակցելու, եւ ինչպես մնացած բոլոր ընտրություններում, ֆավորիտ թեկնածու է համարվում իշխանության թեկնածուն. դա չգրված օրենք է եւ նորմալ է: Կարծում եմ՝ թեկնածուների նախընտրական ծրագիրը ներկայացնելուց 7-10 օր անց մենք կհասկանանք, թե ինչ ակնկալիքներ պետք է ունենալ ընտրություններից:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԼԻՆԵԼՈՒ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻՆ

Ինչպես արդեն հայտնի է, սեպտեմբերի 17-ին տեղի են ունենալու Երեւանի ավագանու ընտրությունները:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինանը, որը ղեկավարելու է Երեւանի ավագանու իշխանական ցուցակը, արդեն մոտավորապես ծրագրել է, թե ովքեր են լինելու ավագանու ընտրությունների ցուցակում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նախ պլանավորված է, որ Ավինյանի հետ ցուցակում պետք է պարտադիր լինի եւ բոլոր քարոզարշավներին մասնակցի Լեւոն Հովհաննիսյանը, որն այս պահին քաղաքապետի տեղակալն է, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարն է:

Ցուցակում պարտադիր լինելու են նաեւ Արմեն Կոտոյանը, Արմեն Հարությունյանը, որը վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի եղբայրն է, Արմեն Ղալիչյանը, Արմեն Գալջյանը, Նուարդ Վարդանյանը, որը արդեն հայտնի է, որ կզբաղեցի կուսակցության 3-րդ համարը, Լեւոն Զաքարյանը, Արթուր Իսպիրյանը, Մարատ Թոխյանը, Լուսինե Գեւորգյանը, Արմեն Սարգսյանը, Աշոտ Սարգսյանը, որն առողջապահության նախկին նախարար, ներկայիս պատգամավոր Արսեն Թորոսյանի ընկերն է, Արթուր Մայիլյանը, Վազգեն Դարբինյանը, Հայկ Միրզոյանը, Պավել Սարգսյանը, Դիանա Քերոբյանը, Գառնիկ Վարդանյանը, որը կառավարությունում է աշխատում, եւ Մանուել Մարգարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ վերոնշյալ ցուցակը գրեթե հաստատված է, բայց պետք է վերջնական քննարկվի Նիկոլ Փաշինյանի հետ: Այս ցուցակում ուզում են ներառել նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի թիմակիցներին: Հարությունյանը նշել է, որ պետք է մարդիկ ունենա Երեւանի ավագանու կազմում: Պետք է մարդիկ ներգրավված լինեն նաեւ պաշտպանության նախկին նախարար Սուրեն Պապիկյանի թիմակիցներից, եւ վերջինիս ասվել է, որ ցուցակ ներկայացնի: Ըստ շրջանառվող լուրերի՝ Արսեն Թորոսյանը եւս ցանկանում է իր վստահելի մարդկանցից մի քանիսին ներառել այս ցուցակում:

Հիմա թեժ պայքար է ընթանում այս անձանց ցուցակում ներառելու համար. յուրաքանչյուրն ուզում է իր ցանկալի մարդուն ներառել, բայց վերջնական որոշումը պետք է կայացնի Փաշինյանը: Վերոնշյալ մարդիկ այս պահի դրությամբ արդեն վերջնական ներառված են:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԲԱՎԱՐԱՐ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ

Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանի շուրջ կատարվածը ընդամենը շոու էր: Ինչպես հայտնի է, ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քավոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրենի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւանքով Բաբկեն Շահումյանը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ: Գեւորգ Սիմոնյանը կալանավորվել էր, ապա ազատ արձակվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նա ակտիվ անցել է աշխատանքի Երեւանի քաղաքապետարանում: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Սիմոնյանը նորմալ աշխատանքի է հաճախում եւ իր շուրջ ստեղծված իրավիճակը փուչիկ է որակել: Նշենք, որ Կորոնավիրուսի տարածման շրջանում ենթադրյալ չարաշահումների գործով դեռ մարտ ամսին կալանավորվել էր նաեւ «Մեդլայն» բժշկական կենտրոնի տնօրենը, 10 բուժաշխատողներ ձերբակալվել էին, անգամ ծանուցագիր էր ուղարկվել առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին, սակայն մինչ օրս այս մասին որեւէ նորություն առկա չէ՝ նախկին նախարարը հարցաքննվեց, թե ոչ: Այսինքն՝ հայտարարություն եղավ, թե չարաշահումներ են եղել, մարդիկ կալանավորվեցին, սակայն մինչեւ օրս վերջնական բացահայտում դեռ չկա:

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը շարունակում է մնալ աղբի ու գարշահոտության մեջ: Օրեր շարունակ չեն դատարկվում աղբամանները, աղբը թափված է ամենուր, իսկ վարչական շրջանի ղեկավարը չի էլ մտածում լուծել աղբահանության խնդիրները: Ամբողջ վարչական շրջանով մեկ աղբակույտեր են, աղբամաններից աղբը դուրս է թափվում, այն էլ՝ տուրիստական այս թեժ շրջանում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Երեւանի Մալաաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի հետ՝ պարզելու, թե ինչու է նման իրավիճակ վարչական շրջանում:

Բարխուդարյանի խոսքով՝ աղբահանություն իրականացնող ընկերությունում այս պահին խնդիրներ կան:

«Աղբահանության հիմնարկում տեխնիկական խնդիրներ են առաջացել, եւ այդ մասին հրապարակորեն հայտարարված է. մոտ օրերս խնդիրը կլուծվի»

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՂԱՔԸ՝ ԱՂԲԻ ՄԵՋ

Երեւանի վարչական շրջանները շարունակում են մնալ աղբի ու գարշահոտության մեջ: Օրեր շարունակ չեն դատարկվում աղբամանները, աղբը թափված է ամենուր, իսկ վարչական շրջանների ղեկավարները չեն էլ մտածում լուծել աղբահանության խնդիրները: Ամբողջ Երեւանով մեկ աղբակույտեր են, աղբամաններից աղբը դուրս է թափվում, այն էլ՝ տուրիստական այս թեժ շրջանում:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը ֆիքսել է Երեւանի Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում տիրող իրավիճակը:

Հուսով ենք՝ մի օր վարչական շրջանների ղեկավարները կվերանայեն իրենց գործելաոճը եւ հատուկ ուշադրություն կդարձնեն փողոցների մաքրությանը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

7 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը ներկայացրել է 2022 թվականի հայտարարագիրը: Ըստ նրա հայտարարագրի՝2020 թվականին Ղազարյանը ձեռք է բերել նոր բնակարան Կոտայքի մարզի Առինջ գյուղում:

Նշված բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքով, իսկ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14 մլ 897 հազար դրամ, որը նշված հիփոթեքի գումարի մնացորդն է հայտարարատու տարում:

Ղազարյանը եկամտահարկի վերադարձի օրենքով Ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 757 հազար դրամ: Ղազարյանի ամուսինը՝Դավիթ Բանուչյանը, որն աշխատում է Հանրային հեռուստաընկերությունում, 2021 թվականին գնել է մեքենա՝ 2015 թվականի արտադրության, MAZDA մակնիշի: Ամուսնու եկամուտները հաշվետու տարում կազմել են 19 մլ 111 հազար դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է անդրադարձել ՔՊ-ական պատգամավորների ձեռք բերած տներին: Ղազարյանն այն անտուններից մեկն է, որը տան տեր է դարձել պատգամավոր դառնալուց հետո:

Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 441 հազար դրամ, իսկ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 660 հազար դրամ, որից 7 մլն 902 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՀԱՋԱՐԱՎՈՐ ԴՈԼԱՐՆԵՐԻ ՏԵՐ

ՀՀ Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը 2022 թվական հայտարարատու տարում հայտարարագրել է մեկ շինություն: Այն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինություն է, որը դեռեւս չի ստացել իրավունքների պետական գրանցում: Շինությունը գտնվում է Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, որը 2017 թվականին նվիրատվություն է ստացել. թե ումից, նշված չէ:

Նա հայտարարագրել է 2 մարդատար ավտոմեքենա՝ 2005 թվականի արտադրության MERCEDES-BENZ, որը ձեռք է բերվել 2017 թվականին, եւ 2013 թվականի արտադրության LEXUS, որը ձեռք է բերել 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 952 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 25 մլն դրամ եւ 59 հազար դոլար: Պատգամավորի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 10 մլն 370 հազար դրամ, որից 10 մլն 281 հազարը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է ՔՊ-ական այն պատգամավորների ունեցվածքին, ովքեր հեղափոխությունից հետո կարողացել են ավելացել իրենց կարողությունը:

Սարգսյանի կինը՝Օլյա Հայրապետյանը, հայտարարագրել է 10 մլն 300 հազար դրամ եւ 25 հազար 500 դոլար կանխիկ գումար, իսկ նրա բանկային դրամական հաշիվների մնացորդները կազմել են 397 հազար դրամ:

Օլյա Հայրապետյանը ստացել է 955 հազար դրամ տարեկան եկամուտ, «ԿԻԵՎ» ՍՊԸ-ից, որպես աշխատանքի վարձատրություն՝ 831 հազար դրամ, իսկ «ՍՎԵՏԼԼԱՆՆԱ» ՍՊԸ-ից՝ 124 հազար դրամ՝ որպես ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ: Այսինքն՝ «ՍՎԵՏԼԼԱՆՆԱ» ՍՊԸ պատկանում է Սարգսյանի կնոջը. այն զբաղվում է մանրածախ առեւտրով: Կազմակերպությունը գրանցված է այն հասցեում, որտեղ գրանցված է նաեւ Օլյա Հայրապետյանը:

Հիշեցնենք նաեւ, որ Հայկ Սարգսյանը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 7-րդ գումարման եւ 8-րդ գումարման պատգամավոր:

«Իմ քայլը» դաշինքից ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր դառնալուց հետո Հայկ Սարգսյանը հաճախ հայտնվել է հայաստանյան մամուլի քննադատության կենտրոնում: Նրա մասին հրապարակումներում հաճախ նա ներկայացվում է որպես Նիկոլ Փաշինյանի «ախրանիկ» կամ «ջրի շիշ բռնող»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզմալյանը պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել: Այս մասին հայտնում են ԿԳՄՆ-ից:

Հիշեցնենք, որ հուլիսի 17-ին «Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդի միաձայն ձայներով՝ Արա Խզմալյանը ընտրվել է Մատենադարանի տնօրեն, եւ, ըստ օրենքի, նա երկու պաշտոնը համատեղելու իրավունք չունի:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով՝Սարգիս Մարգարյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ՝ ազատվելով Սյունիքի մարզային քննչական վարչության պետի պաշտոնից:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿՈՉԸ

Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆաբիո Մասսիմո Կաստալդոն Ադրբեջանի իշխանություններից պահանջել է անհապաղ դադարեցնել Լեռնային Ղարաբաղի շրջափակումը:

«Ավելի քան 7 ամիս առաջ ադրբեջանցի կեղծ էկոակտիվիստները փակեցին Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միակ ճանապարհը: Ատելությամբ լցված այդ վարքագիծը սննդի բացակայության եւ առողջապահական ծառայությունների հասանելիության խոչընդոտման պատճառով վտանգի տակ է դնում հարյուրհազարավոր մարդկանց կյանքը: Ադրբեջանի կառավարությունից պահանջում ենք անհապաղ դադարեցնել շրջափակումը եւ թույլատրել առաջին անհրաժեշտության ապրանքների տարանցումը: Մենք չենք կարող լռություն պահպանել մարդկության դեմ հանցագործություն հանդիսացող այս վայրագությունների նկատմամբ»,- գրել է Կաստալդոն Twitter-ի իր միկրոբլոգում:

ՀՀ ԳԾ ՊԵՏԸ՝ ԱՄՆ–ՈՒՄ

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող ՀՀ ՋՈՒ ԳԾ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը մայրաքաղաք Վաշինգտոնում մասնակցել է ԱՄՆ Ազգային գվարդիայի նահանգային համագործակցության ծրագրի 30-ամյակին նվիրված համաժողովին: Միջոցառման ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ԱՄՆ Ազգային գվարդիայի բյուրոյի պետ, գեներալ Դանիել Հոկանսոնի, ԱՄՆ եվրոպական հրամանատարության ռազմավարության, պլանավորման եւ քաղաքականության հարցերով տնօրեն, գեներալ-մայոր Դանիել Լասիկայի եւ Կանզաս նահանգի ադյուտանտ գեներալ, Ազգային գվարդիայի հրամանատար, բրիգադի գեներալ Մայքլ Վեներդիի հետ:

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԸ՝ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի եւ ԲԴԽ նախագահի նախկին դաշտոնակատար, ՀՀ նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի խոսակցության ձայնագրության հիման վրա նախաձեռնված վարույթը նորից կվերաբացվի: Հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Մերի Մոսինյանի նախագահությամբ, վերացրել է քրեական վարույթը կարճելու որոշումը: Այժմ աղմկահարույց ձայնագրությունների գործը կրկին գտնվում է Հակակոռուպցիոն կոմիտեում:

Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրած ասուլիսում աղմկահարույց ձայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ: Աղմկոտ զրույց-պահանջը տեղի է ունեցել ընթրիքի սեղանի շուրջ, որին ներկա են եղել ոչ միայն Վարդազարյանն ու Ջհանգիրյանը, այլ նաեւ ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը: Հրապարակված ձայնագրությունից հետեւում էր, որ Վարդազարյանին վարչապետի անունից առաջարկվել է հրաժարական տալ, իսկ Ջհանգիրյանն էլ ստանձնել է միջնորդի դեր՝ երաշխավորելով, որ նրա նկատմամբ հետապնդումներ չեն իրականացվի, եթե հրաժարական ներկայացնի: Ջհանգիրյանը Հանրայինի եթերում անձամբ խոստովանել է, որ բանակցություններ իսկապես վարել է Վարդազարյանի հետ հրաժարական տալու համար:

Ավելին՝ հայտարարել է, որ ԲԴԽ նախագահին հրաժարական պարտադրելն այնքան էլ հեշտ գործ չէ, ու ինքը հոգեբանական հնարքներ է կիրառել, «կուտ տվել»: Աղմկահարույց ձայնագրությունից եւ առավել անհասկանալի հարցազրույցից օրեր անց հայտարարվեց, թե Գագիկ Ջհանգիրյանն ունի առողջական խնդիրներ եւ ենթարկվել է վիրահատության: Ակնառու էր, որ Ջհանգիրյանը առողջական խնդիրների քողի ներքո պատրաստվում է հրաժարական տալ, իսկ հուլիսի 1-ին արդեն պաշտոնապես հաստատվեց՝ Ջհանգիրյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: ՀՀ քննչական կոմիտեում նշված ձայնագրության կապակցությամբ նախապատրաստված նյութերով նախաձեռնվել էր քրեական վարույթ, որը դեկտեմբերին կարճվել է՝ հանցանքի բացակայության հիմքով:

Նշված որոշման դեմ Վարդազարյանը բողոք էր ներկայացրել, սակայն, մինչ բողոքը կստացվեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը սեփական նախաձեռնությամբ վերացրել էր քննիչի որոշումը՝ ըստ քննչական ենթակայության գործը Հակակոռուպցիոն կոմիտե ուղարկելու որոշում կայացնելով: Միեւնույն ժամանակ դատախազն արձանագրել է, որ նախաքննության ավարտ հայտարարելուց հետո ժամկետները չեն պահպանվել, քանի որ ավարտ հայտարարելու մասին տեղեկացնելուց հետո քննիչը ժամանակ չի տրամադրել բողոքարկման համար:

Վարույթը Հակակոռուպցիոն կոմիտե տեղափոխվելուց հետո փաստացի սառեցված վիճակում պահվել է երեք ամիս, ապա՝ կարճվել:

Դատական կարգով բողոքարկման արդյունքում Հակակոռուպցիոն դատարանը որոշել է բավարարել Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցչի բողոքը եւ վերացնել վարույթը կարճելու որոշումը: Ըստ այդմ՝ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործը վերաբացվեց:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ՝ ՎՃՌԱԲԵԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանի փաստաբան Մհեր Հակոբյանը հայտնել է, որ Վաչագան Ղազարյանի խափանման միջոց կալանավորման հարցով բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն Վերաքննիչ դատարանը մերժել է նրա կալանավորման դեմ փաստաբանների ներկայացրած բողոքը, եւ հիմա նրանք դիմել են ՀՀ վճռաբեկ դատարան եւ մինչ օրս պատասխան չունեն: Այս պահին Վաչագան Ղազարյանը գտնվում է ԱԱԾ մեկուսարանում:

Մայիսի 28-ին գրել էինք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն, կալանավորվել է Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանը:

Նա 5 տարի առաջ էլ՝ հունիսի 25-ին, ձերբակալվել էր բանկից դուրս գալիս: Նրա ճամպրուկում հայտնաբերվել էր 120.000 դոլար եւ 436 մլն դրամ:

Ավելին՝ մանրամասնել էինք, թե ինչ քրեական վարույթի շրջանակներում է կալանավորվել Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-ում քրեական վարույթ կա ՊՆ-ի հողատարածքների ապօրինի վաճառքի մասով, եւ, ահա, այս քրեական վարույթի շրջանակներում էլ կալանավորել են Վաչագան Ղազարյանին:

ԵՐԵԽԱՆ՝ ԲԵՌՆԱԽՑԻԿՈՒՄ

Ակնալիճ գյուղի դպրոցականները վիճել են, տղաներից մեկի հայրը երեխային մտցրել են բեռնախցիկը: Մեզ հայտնի դարձավ որ Ակնալիճ գյուղի Գառնիկյան թաղամասի 1-ին շենքի 12-րդ բնակարանի բնակչուհի Գոհար Մարգարյանը ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մեծամորի բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 21.12.2022թ. Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի միջնակարգ դպրոցում ժամը 09:30-ի սահմաններում իր տղայի՝ Արմեն Մարգարյանի եւ վերջինիս դասընկեր Արտեմի միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել, սակայն վիճաբանության ժամանակ նրանք միմյանց չեն հարվածել, վիճաբանությունը եղել է որպես լեզվակռիվ, ինչը որոշ ժամանակ անց հարթվել է:

Այնուհետեւ՝ 22.12.2022թ., Ակնալիճ գյուղի նույն դպրոցում առավոտյան ժամը 09:40-ի սահմաններում իր տղայի եւ Արտեմի միջեւ նորից վիճաբանություն է տեղի ունեցել միմյանց վիրավորելու ձեւով, որից հետո Արտեմը զանգահարել է իր հայր Հարութին եւ տեղեկացրել է, որ նորից վիճել են: Որոշ ժամանակ անց Հարութը գնացել է դպրոց եւ բռնի ուժով բռնելով իր երեխայի պարանոցից, քաշելով՝ ստիպողաբար իր որդի Արմենին գցել է իր կողմից վարվող «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան եւ փորձել է շարժվել:

Որդու դասղեկ Մանուկյանը եւ նախկին դասղեկ Շահբազյանը ստիպողաբար վերցրել են Հարութի մեքենայի վրայից բանալիները եւ իր տղային հանել են բեռնախցիկից դուրս: Հարություն Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ 20-ԱՄՅԱ ՏՂԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Բյուրեղավանում սպանված 20-ամյա Կարենի քույրը՝ Սառան, որի անունը հարգելի պատճառերով փոփոխության է ենթարկվել, մեզ մանրամասներ հայտնեց ողբերգական դեպքից:

Ըստ Սառայի՝ իր եղբայրը երկու ընկերների հետ գարեջրատուն է գնացել, որտեղ մնացել են 1 ժամ: «Եղբայրս՝ Կարենը, անգամ հարբած չի եղել, ուղղակի ընկերներով, Վարդավառ է եղել, գնացել էին գարեջրատուն, իսկ եղբորս բանակի քեֆը եղել էր 10 օր առաջ: Տաքսիստը եղել է եղբորս ընկերներից մեկի հորեղբոր տղան, որը նրանց տարել էր գարեջրատուն, եւ պայմանավորվել էին, որ նա էլ գնալու էր, նրանց կրկին գյուղ տաներ: Զանգահարել են տաքսիստին, նա ասել է, որ հիմա հարմար չէ՝ գա իրենց հետեւից: Իմ եղբայրը իր երկու ընկերների հետ որոշել են ոտ-ոտ իջնել, մինչեւ տաքսիստը կգա: Ճանապարհից իջնելիս նորից զանգահարում են տաքսիստին ու ասում են՝ բա ի՞նչ եղար, քեզ ենք սպասում. այլ բան չի եղել», - պատմում է նա:

Մեր հարցին՝ հայհոյանքներ չեն հնչել արդյոք տաքսիստի հասցեին, նա նշեց. «Տաքսու վարորդը եղել է Արթուրը: Տաքսու վարորդը եկել է տղաների հետեւից, եւ նրա հետ է եղել Միհրը, որը հայտնի է նույն քաղաքում՝ որպես հարբեցող, թմրանյութ օգտագործող: Երբ տաքսին կանգնել է, ու իմ եղբայրը երկու ընկերների հետ մոտեցել են՝ նստեն տաքսին, նույն րոպեին մեքենայից իջել է Միհրը ու միանգամից կտրել է եղբորս պարանոցը ու հարվածել երկու երիտասարդներին, որոնք եղել են եղբորս հետ: Իսկ ինչ վերաբերում է Միհր կոչեցյալին, ապա ոստիկանությունում ցուցմունքներ կան, որ նա տարիներ առաջ մեկին կացնահարել է: Կրկնում եմ՝ իմ եղբայրը հարբած չի եղել, վիճաբանություն չի եղել, ամեն ինչ եղել է այդ Միհրի պատճառով, որը եղել է աֆեկտի ազդեցության տակ»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 17-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 51 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՌՈՒՑԱԾԻ ՎԵՐՋԸ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ

2017թ. հունիսի 6-ին Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ Կողբ գյուղում տեղի ունեցավ «Թումո» կենտրոնի հիմնարկեքի արարողությունը: Այդ միջոցառմանը մասնակցում էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, «Սիմոնյան» կրթական հիմնադրամի տնօրեն Սեմ Սիմոնյանը, Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը, «Կողբ» հիմնադրամի նախագահ Արման Բարսեղյանը, այլ պաշտոնյաներ, արտերկրից բազմաթիվ հյուրեր: Հանդիսավոր արարողության ժամանակ բազմաթիվ ելույթներ հնչեցին, հայտարարվեց, որ «Թումո» կենտրոնը կկկառուցվի Լոս-Անջելեսից եւ Բուենոս Այրեսից բարեգործների, «Կողբ» հիմնադրամի, Մոնակոյից «Առաքելություն մանկություն» բարեգործական կազմակերպության, Յուքոմի, աշխարհահռչակ «Ֆեդեքս» ընկերության հայաստանյան ներկայացուցչության ֆինանսական միջոցներով:

Հիմնարկեքի արարողության ժամանակ հայտարարվեց, որ «Թումո» կենտրոնը կզբաղեցնի 2200 քառակուսի մետր տարածք, կենտրոն կհաճախեն Կողբից ու Նոյեմբերյանի տարածաշրջանի բնակավայրերից 600-1000 երեխա, կենտրոնի ծառայություններից առավոտյան ժամերին կօգտվեն նաեւ կենտրոնի հարեւանությամբ տեղակայված Կողբի սահմանապահ զորամասի զինծառայողները: Հիմնարկեքի հանդիսավոր միջոցառման ժամանակ հայտարարվեց, որ «Թումո» կենտրոնը կգործարկվի մեկ տարուց: Անցել է ավելի քան 6 տարի, սակայն կենտրոնը չի գործարկվում: Անցած 6 տարում մի քանի անգամ «Թումո» կենտրոնի շինարարությունը դադարել է, որի պատճառը եղել է ֆինանսական միջոցների պակասը: Այժմ կենտրոնի շինարարությունը մտել է եզրափակիչ փուլ, սակայն հայտնի չէ, թե երբ կսկսվի այդ կենտրոնի շահագործումը:

ԳԱՂՏՆԻ ԲԱՐԵԲԱՐԸ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ բարերարի աջակցությամբ այժմ վերանորոգվում են Դիլիջան քաղաքի կենտրոնական հրապարակի գիշերային լուսավորության լապտերները: Դիլիջանի համայնքապետարանի եւ բարերարի միջեւ պայմանավորվածության համաձայն՝ այդ լապտերները համահունչ են լինելու քաղաքի կենտրոնական հրապարակի, դրանց հարակից շինությունների ճարտարապետությանն ու շրջակա բնությանը: Համայնքապետարանի հաղորդագրության միջ բարեգործի անունը չի նշվում: Դրա պատճառը կարող է լինել երկուսը՝ բարեգործը չի ցանկացել, որ իր անունը, թեկուզ բարեգործական ձեռնարկով, առնչվի Դիլիջանի քաղաքի ՔՊ-ական իշխանության հետ, կամ էլ բարեգործի անունով հանդես եկողը նաեւ այլ՝ ոչ բարեգործական առնչություններ ունի Դիլիջանի համայնքապետարանի հետ, ուստի նպատակահարմար չի համարվել նրա անունը հանրայնացնելը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿՎԵՐԱԴԱՌՆԱՄ». ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԵՄ դատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինի հետ:

-Ինչպե՞ս ստացվեց, որ Հայաստանում առաջին անգամ նշանակվեցիք դեսպան: Ի՞նչ նախապատմություն կա առաջին նշանակման հիմքում: Կխնդրեմ համառոտ պատմեք, թե ինչպես ընդունեցիք այդ առաջարկը:

-Առաջին դեպքում այս պաշտոնի առաջարկը ստացել եմ իմ երկրի՝ Գերմանիայի արտաքին գործերի ծառայության կողմից. ես արդեն եղել էի այստեղ, իսկ Եվրամիության համակարգում՝ դա իմ որոշումն էր: Դու դիմում ես, քեզ ընտրում են: Հայաստանում 2018-ին տեղի ունեցած հեղափոխությունից հետո շատ մեծ էր ցանկությունս այդ փոփոխության մասը լինել, եւ սա էր հիմնական պատճառը, որ ես 2019 թվականին եկա Հայաստան առաջին անգամ: Հայաստանի վերաբերյալ իմ ընկալումները լիարժեք չէին: Բնականաբար, գիտեի, թե ուր եմ գնում, ինչ երկիր է, գիտեի՝ ընդհանուր քաղաքական ինչ վիճակ է, բայց երկրորդ անգամ երբ վերադարձա, նորովի բացահայտեցի երկիրը: Հասկացա, որ սա միանգամայն այլ երկիր է: Հեղափոխությունից հետո մեծ փոփոխություններ էին տեղի ունեցել մարդկանց շրջանում, Երեւանն այլ էր, կարելի է ասել՝ ավելի ակտիվ ու բաց քաղաք էր՝ գաղափարներով ու տեսլականներով լի:

-Երբ արդեն երկրորդ անգամ, որպես ԵՄ դեսպան, նշանակվեցիք, եկաք Հայաստան, ո՞վ կամ ովքե՞ր դիմավորեցին Ձեզ, եւ ինչպիսի՞ փոփոխություններ նկատեցիք մեր երկրում առաջին հայացքից:

-Կեսգիշերին ինձ դիմավորեց պատվիրակության ամբողջ անձնակազմը, եւ դա շատ հետաքրքիր փորձ էր, նրանք էլ էին հոգնած, ես էլ, բայց ընդունելությունը շատ ջերմ էր: Հետո օրեր էին լինում, որ ես գնում էի ինձ ծանոթ վայրեր, փորձում էի այցելել ինձ հետաքրքիր սրճարաններ, նախկինից ծանոթ կամ նոր վայրեր, որոնք փորձում էի բացահայտել: Հին վայրերից բոլորը չէ, որ գտա, սակայն այն, ինչ գտա, զգացի, որ դրական փոխվել են: Հայաստանում իմ երկրորդ առաքելության սկիզբն իսկապես դրական էր:

-Դուք ուրիշ մշակույթ, կենցաղավարություն եւ ավանդույթներ ունեք: Հայաստանում առկա ավանդույթների, կենցաղի ու մշակույթի մեջ ի՞նչ նմանություններ եք գտել, ինչպե՞ս եք հարմարվել մեր սովորույթների հետ:

-Նախ պետք է նշել, որ հետաքրքրասեր մարդ եմ: Այս մասնագիտությունն էլ ընտրել եմ, որպեսզի հնարավորություն ունենամ այլ մշակույթ ունեցող վայրերում ապրել: Եվ դա նշանակում է, որ պետք է կարողանալ ճանաչել այլ մշակույթ կրող մարդկանց ու հասկանալ՝ նրանց հետ ինչպես են աշխատել: Եթե դիվանագետը հավատարիմ մնա իր երկրի մտածելակերպին, ապա անհնար կլինի հասկանալ այլ երկրի մտածելակերպը, եւ այդ առումով ես բավականին բաց եմ: Յուրահատկություններից կարող եմ նշել հայերի հյուրընկալությունը եւ հյուրասիրությունը, որը եվրոպացու համար կարող է երբեմն շատ թվալ, սակայն այստեղ պարզապես ընդունված է իրար այդ միջոցով հարգել-պատվել, ուտել-խմել: Ես մի օր պարզապես սկսեցի պայման դնել մարդկանց առջեւ. ես կընդունեմ Ձեր հրավերը, եթե ինձ չստիպեք ուտել-խմել:

-Հայաստանի քաղաքացիներին, կանանց, լրագրողներին, քաղաքական գործիչներին, պաշտոնյաներին ի՞նչ խորհուրդ կտաք՝ որպես ԵՄ դեսպան. Ձեր ազդեցիկ խոսքը շատ կարեւոր է:

-Կարծում եմ՝ Հայաստանը եւ հայ ժողովուրդը դժվար եւ բարդ ժամանակաշրջան են անցել: Ես այստեղ էի Քովիդ համավարակի ժամանակ, պատերազմի ընթացքում, որից հետո՝ ներքին քաղաքական հարցերը, արտահերթ ընտրությունները, ցույցերը եւ այլն: Այս ամենի լուծումը միայն երկխոսությունն է: Գուցե դժվարություններից ելնելով՝ մարդիկ հաճախ դիմում են ատելության խոսքին, շատ են քննադատում մյուսներին, առանց նրանց լսելու: Ցանկալի է, որ այդպես չլիներ: Հայերը մեծ ներուժ ունեցող, ստեղծարար մարդիկ են: Այստեղ ունեք տեղեկավական տեխնոլոգիաների ոլորտի ուղղությամբ մեծ հնարավորություններ, եւ անհրաժեշտ է, որ մարդիկ համատեղեն ջանքերը, այլ ոչ թե պայքարեն միմյանց դեմ: Այստեղ ես տեսնում եմ հասարակության կոնկրետ խմբեր, եւ այն, ինչ նրանք անում են, առողջ չէ: Շատ է ապատեղեկատվությունը: Իսկապես կուզեի, որ էթիկական կանոններ պահվեին հենց լրագրության մեջ, կարողանային զարգացնել երկիրը յուրաքանչյուրն իր ոլորտում: Երիտասարդներն այնքան շատ էներգիա ունեն, նրանք ուզում են տեսնել ու անել փոփոխություններ, եւ հենց դրա համար ես նրանց շատ եմ սիրում: Առանց անտեսելու բարդ իրավիճակները, ես ցանկանում եմ մաղթել Հայաստանին, որ հաջորդ տարում արդեն կարողանան տարբեր ոլորտներում հասնել զարգացվածության բարձր աստիճանի, գտնել դրական օրակարգի իրականացնում այս դժվար ու բարդ օրերում եւ անպայման շարունակել ժողովրդավարական ուղին. սա շատ կարեւոր է Հայաստանի համար:

-Երբ Հայաստանից գնաք, ի՞նչ եք Ձեզ հետ տանելու:

-Քանի որ ես արդեն եղել եմ այստեղ, եղել են, իհարկե, իրեր, որոնք ինձ հետ տարել եմ, կան որոշները, որոնք հետ եմ բերել նույնիսկ, որպեսզի նորից տարե, օրինակ՝ Ալբերտ Վարդանյանի ստեղծագործած իմ ամենասիրելի արձանիկը եւ, իհարկե, լավ հիշողություններ:

-Որպես տուրիստ՝ կգա՞ք Հայաստան Ձեր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո:

-Միանշանակ կվերադառնամ: Ես պետք է փոքր-ինչ դադար ունենամ, եւ ինձ հաջորդող դեսպանին հնարավորություն տամ սովորելու աշխատանքին, բայց որոշակի ժամանակ անց միանշանակ կվերադառնամ Հայաստան:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿՈՉ

Խստագույնս դատապարտում եւ անընդունելի ենք համարում Բրյուսելում կայացած վերջին հանդիպման արդյունքներով Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հայտարարությունը:

Այս մասին ասված է Արցախի հասարակական կազմակերպությունների հայտարարության մեջ.

«Արցախի Հանրապետության հասարակական կազմակերպությունները ողջունում եւ շնորհակալություն են հայտնում 470 եվրոպական ՀԿ-ներին եւ միավորումներին, որոնք նամակ են հղել Եվրոպական միությանը եւ Եվրոպական խորհրդի ղեկավար անձանց՝ հորդորելով անհապաղ եւ արդյունավետ քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կողմից Արցախի շարունակական անօրինական շրջափակումը վերացնելու համար:

Չափազանց կարեւորում ենք եվրոպական գործընկերների կոչը՝ ճանաչել Արցախի բնիկ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացումը՝ որպես կենսական անհրաժեշտություն: Կիսում ենք այն տեսակետը, որ անհրաժեշտ է օգտագործել բոլոր լծակները, որպեսզի Արցախի կարգավիճակն արտացոլի իր բնիկ հայ բնակչության ժողովրդավարական կամարտահայտումը, ինչպես նաեւ ստեղծի պայմաններ՝ կայուն խաղաղության եւ անվտանգության համար:

Համոզված ենք, որ ադրբեջանաղարաբաղյան հակամարտության հարատեւ, արժանապատիվ եւ արդար կարգավորումը պետք է հիմնվի Արցախի ժողովրդի անհատական եւ կոլեկտիվ իրավունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի հարգման վրա:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԲԱՑՈՒՄ

ՆՈՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ ՊԱՏՐԱՍՏ Է

Հուլիսի 18-ին տեղի է ունեցել Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոցի «Կիլիկիա» մարզադահլիճի պաշտոնական բացման արարողությունը:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը, տարբեր մարզաձեւերի ներկայացուցիչներ, մարզաշխարհի երախտավորներ:

Ներկաները շրջել են հիմնանորոգված մարզադահլիճում, ծանոթացել պայմաններին, հետեւել մարզիկների պարապմունքներին:

«Դժվար է գերագնահատել նման ենթակառուցվածքներ ունենալու կարեւորությունը: Սա մեր երեխաների համար առաջին հերթին սպորտով զբաղվելու, առողջ ապրելակերպ ունենալու հնարավորություն է, որը մեծ նշանակություն ունի նաեւ հասարակության զարգացման համար»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ խաղային մարզաձեւերի զարգացումը նախարարության համար առաջնահերթ ուղղություն է, եւ պետք է շարունակաբար խրախուսել երեխաների հետաքրքրվածությունն այդ մարզաձեւերով:

Մարզադահլիճի հիմնանորոգման նպատակով, ՀՀ կառավարության որոշմամբ, հատկացվել էր 24 մլն դրամ: Հիմնանորոգման ենթակա մարզադահլիճում ապահովված են հիմնական պահանջները՝ կառույցի սեյսմակայունություն, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն, ներքին հաղորդակցման ուղիներ (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջեռուցում), օդափոխություն, տեսահսկման համակարգերի կառուցում կամ հիմնանորոգում, տարածքի բարեկարգում, գոյություն ունեցող շենքի եւ շինության հատակագծային լուծումների արդիականացում եւ միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ հարդարում եւ այլն:

Ապրիլին կայացած Եվրոպայի ծանրամարտի առաջնության շրջանակում «Կիլիկիա» մարզադահլիճը դարձել էր ծանրամարտի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մարզումային դահլիճ:

Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Ռոման Ամոյանի խոսքով՝ արդեն իսկ շուրջ 150 երեխա է հաճախում մարզադպրոց, նոր հաստիքացուցակով աշխատում է 12 մարզիչ:

Բադմինթոնի գլխավոր մարզիչ Հրաչյա Պողոսյանը եւս փաստել է, որ մեծ հաջողություններ գրանցելու նախապայմաններն ապահովված են, ինչը կնպաստի մարզաձեւի զարգացմանը Հայաստանում:

Օգոստոսի 5-ին Հայաստանի թիմը մասնակցելու է մինչեւ 17 տարեկանների Եվրոպայի բադմինթոնի առաջնությանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ-ի օգոստոսի 02-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:

Թիվ 59/1 լոտ՝ ոսկյա զարդեր 135,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 127 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 1.770.000 ՀՀ դրամ: Թիվ 60 լոտ՝ ոսկյա զարդեր 137,9 գր. ընդհանուր քաշով, որից 7,1գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝162.240 ՀՀ դրամ, 13,7գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 13 գր.) 500 հարգի՝ 152.680 ՀՀ դրամ, 117,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 115 գր.) 585 հարգի՝ 1.602.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.917.320 ՀՀ դրամ: Թիվ 61 լոտ՝ ոսկյա զարդեր 80,87 գր. ընդհանուր քաշով, որից 8,07գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝184.400 ՀՀ դրամ, 7,8 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 7,5 գր.) 500 հարգի՝88.000 ՀՀ դրամ, 15,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 4,5 գր.) 585 հարգի՝62.700 ՀՀ դրամ, 49,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 49 գր.) 585 հարգի՝682.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.017.800 ՀՀ դրամ: Թիվ 62 լոտ՝ ոսկյա զարդեր 14 գր. ընդհանուր քաշով, որից 9,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 9,2 գր.) 585 հարգի՝ 128.200 ՀՀ դրամ, 4,6 գր. քաշով ոսկյա զարդը 500 հարգի՝54.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 182.200 ՀՀ դրամ: Թիվ 63 լոտ՝ ոսկյա զարդեր 22,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 22,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 309.000 ՀՀ դրամ: Թիվ 64 լոտ՝ ոսկյա զարդ 10,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 149.000 ՀՀ դրամ: Թիվ 65 լոտ՝ ոսկյա զարդեր 16,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 16 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 222.000 ՀՀ դրամ: Թիվ 66 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 16,7 գր. ընդհանուր քաշով, որից 3,4 գր. քաշով ոսկյա զարդը 750 հարգի՝60.600 ՀՀ դրամ, 9,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 8,6 գր.) 585 հարգի՝ 119.800 ՀՀ դրամ, 3,9 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝89.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 269.500 ՀՀ դրամ: Թիվ 68 լոտ՝ ոսկյա զարդ 14,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 14 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 195.000 ՀՀ դրամ: Թիվ 69 լոտ՝ ոսկյա զարդեր 13,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 171.400 ՀՀ դրամ: Թիվ 70 լոտ՝ ոսկյա զարդեր 8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 111.400 ՀՀ դրամ:Թիվ 71 լոտ՝ ոսկյա զարդեր 11,1 գր. ընդհանուր քաշով, որից 8,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 7,4 գր.) 585 հարգի՝ 103.100 ՀՀ դրամ, 2,2 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 2,1 գր.) 500 հարգի՝24.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 127.700 ՀՀ դրամ: Թիվ 72 լոտ՝ ոսկյա զարդեր 17,2 գր. ընդհանուր քաշով, որից 15,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 15 գր.) 585 հարգի՝ 209.000 ՀՀ դրամ, 1,8 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 1,7 գր.) 500 հարգի՝ 19.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 228.900 ՀՀ դրամ: Թիվ 73 լոտ՝ ոսկյա զարդ 5,07գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 70.500 ՀՀ դրամ:Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

հեռ.՝ 043 00-42-27:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ԼՈՒՐԵՐ

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ՝ ԱՐՑԱԽՈՒՄ ⇨

Ստեփանակերտում հուլիսի 18-ից հանրային տրանսպորտը կգործի խիստ սահմանափակ ռեժիմով, կանոնավոր ուղեւորափոխադրումներ իրականացնող գրեթե բոլոր ավտոբուսները չեն գործի:

«Արցախի շրջափակմամբ պայմանավորված՝ վառելիքի գերսղության պայմաններում ՏԿԵ-ն հաշվարկներ է պարբերաբար իրականացնում, եւ եթե մինչեւ օրս հնարավոր էր պահպանել երթուղիների քանակը որոշակի սահմանափակումներով, հուլիսի 18-ից ստիպված կլինենք կրճատել մայրաքաղաքի երթուղին՝ բացառությամբ Նոր Արեշ թաղամասին սպասարկող երթուղիները»,- ԼՂ Հանրային հեռուստաընկերության հետ զրույցում ասել է ՏԿԵ նախարարի առաջին տեղակալ Վլադիմիր Հարությունյանը:

ԼՂ-ում մինչհամայնքային երթուղիները շարունակելու են սպասարկվել դեռեւս գործող չվացուցակով, սակայն այդ երթուղայինների աշխատանքն էլ երկար չի շարունակվի՝ հաշվի առնելով վառելիքի սուղ պաշարը:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

Հիմնանորոգվում է Երեւան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 1,8 կմ հատվածը: Այս մասին տեղեկացնում են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից:

Ճանապարհահատվածն անցնում է Շիրակի մարզով՝ Քեթիի լեռնանցքով:

«Շինարարի կողմից տեղադրվում են ջրահեռացման վաքերը, ավարտել են ներքին շերտի ասֆալտապատման աշխատանքները, կատարվում է կողնակների հարթեցում»,- ասվում է հաղորդագրությունում:

Հիմնանորոգումը մեկնարկել է այս տարի, ավարտը նույնպես նախատեսված է ընթացիկ տարում:

Նշվում է, որ հիմնանորոգումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Կապալառու կազմակերպությունն է «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն, տեխնիկական հսկողությունն իրականացնում է «Ռ Քոնսալթ» ՍՊԸ-ն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ 20-ՕՐՅԱ ՓԱՌԱՏՈՆ

Իտալիայում Հայաստանի դեսպանությունը՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի եւ ֆանդակագործ Վիգեն Ավետիսի հետ համագործակցությամբ, Արմավիրի մարզի Փարաքար համայնքում հուլիսի 15-ին տվել է Pax Armenica (Հայկական խաղաղություն) խորագիրը կրող Արա Հարությունյանի անվան ֆանդակագործության միջազգային հայ-իտալական փառատոնը: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում տեղեկացնում է Իտալիայում Հայաստանի դեսպանությունը:

«Գաղափարը հղացել էր դեռեւս մեկ տարի առաջ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի՝ 2022թ. հունիսի 15-ին Իտալիա կատարած աշխատանքային այցի ընթացքում, երբ նախարարը պատրաստակամություն հայտնեց որպես հասարակական աշխատանք աջակցել ՀՀ դեսպանությանը այս հարցում՝ միեւնույն ժամանակ ակնկալելով երկարաժամկետ առումով սոցիալական բարիք ստեղծել Փարաքար համայնքի համար:

Շուրջ մեկ տարի տեւած անխոնջ աշխատանքի եւ գերազանց համագործակցության արդյունքում այս նախագիծն իրականություն դարձավ:

Փառատոնը նշանավորում է նաեւ Երեւանի եւ Կարարայի միջեւ քույրացման հուշագրի 50-ամյակը եւ նվիրվում է հանրահայտ հայ քանդակագործ Արա Հարությունյանի հիշատակին: Բոլոր մարմարները փառատոնին նվիրաբերվել են Կարարա քաղաքի կողմից:

Արա Հարությունյանն իր ստեղծագործական տաղանդով մեծ ներդրում է ունեցել Երեւանն ու Կարարան կամրջելու գործում՝ հեղինակելով Կարարայում գտնվող Հայ-իտալական բարեկամության հուշարձանը, ինչպես նաեւ նպաստելով Երեւանում մեր երկու հիասքանչ քաղաքների քույրացումը նշանավորող հուշարձանի տեղադրմանը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ յոթ երկրներից ժամանած հայտնի քանդակագործներն ավելի քան 20 օր Կարարայից նվիրաբերված սպիտակ մարմարից եւ հայկական տուֆից կերտելու են խաղաղությանը նվիրված 15 քանդակներ, որոնցից 2-ը կտրամադրվի Երեւան քաղաքին՝ ի նշանավորումն Երեւանի եւ Կարարայի համագործակցության 50-ամյակի:

Փառատոնի շրջանակներում AknEye ընկերության կողմից առաջին անգամ ստեղծվելու են ֆիզիկական քանդակների թվային՝ NFT տարբերակները, որոնց վաճառքից գոյացած գումարներն ուղղվելու են Փարաքար համայնքում ժամանակակից արվեստանոցի ստեղծմանը:

«Փառատոնին իր մասնակցությունն է բերել նաեւ Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Միջոցառման փակման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա օգոստոսի 5-ին Իտալիայից հրավիրված պատվավոր հյուրերի մասնակցությամբ»,- հայտնում է աղբյուրը:

Իտալիայում Հայաստանի դեսպանությունն իր խորին շնորհակալությունն է հայտնել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանին՝ տեղում ողջ կազմակերպչական աշխատանքը ստանձնելու, գաղափարն իրականություն դարձնելու եւ այն սոցիալական կարեւոր ծրագրի վերածելու համար, քանդակագործներ Վիգեն Ավետիսին եւ Մասսիմո Լիպպիին՝ փառատոնի գեղարվեստական ղեկավարումը ստանձնելու համար, Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանին՝ նախագծին աջակցելու համար, ողջ աշխարհից ժամանած բոլոր քանդակագործներին՝ 20 օր անընդմեջ քանդակելու, ստեղծագործելու պատրաստակամության համար, ինչպես նաեւ սպիտակ մարմարի արդյունահանման եւ մշակման կենտրոն հանդիսացող իտալական Կարարա քաղաքին՝ մարմարները նվիրաբերելու համար:

ՍՊՈՐՏ

ՀԱՅՏՆԻ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Հայաստանի ծանրամարտի Մ20 եւ Մ23 հավաքականներն ընդլայնված կազմով կմասնակցեն Եվրոպայի առաջնությանը:

Ռումինիայում կայանալիք առաջնության թիմերի կազմում են (Մ20) Սեյրան Խուդինյանը (55 կգ), Մերուժան Եղոյանը (61 կգ), Տիգրան Կարապետյանը (67 կգ), Գոռ Սահակյանը, Մարտին Պողոսյանը (73 կգ), Մնացական Աբրահամյանը (81 կգ), Սուրեն Գրիգորյանը (89 կգ), Ֆելիքս Գեւորգյանը (96 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ):

Մինչեւ 20 տարեկան աղջիկներ՝ Ալեքսանդրա Գրիգորյան (59 կգ), Անուշ Արշակյան (64 կգ), Ալինա Սուքիասյան (71 կգ), Աննա Ամրոյան (76 կգ), Էմմա Պողոսյան (81 կգ), Մարգարիտա Առաքելյան (87 կգ), Ջուլիետա Ավանեսյան (+87 կգ):

Մ23 տղամարդիկ՝ Գառնիկ Չոլակյան (61 կգ), Ռաֆիկ Հարությունյան, Կարեն Մարգարյան (81 կգ), Գեւորգ Ղահրամանյան (89 կգ) Պետրոս Պետրոսյան, Յաշա Մինասյանը (109 կգ):

Մ23 կանայք՝ Լիանա Գյուրջյան (87 կգ), Լուիզա Սահիրադյան, Մերի Թումասյան (+87 կգ):

Ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը կանցկացվի հուլիսի 24-ից օգոստոսի 3-ը:

ԿԱՐԵՎՈՐ ՓՈՒԼ՝ ՄՐՑԱՇԱՐԻՑ ԱՌԱՋ

Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի համար Եվրոպայի Մ22 տարեկանների առաջնության ենթախմբային մրցաշարի անցկացումը նախապատրաստական կարեւոր փուլ է 2025 թվականի Մ17 տարեկանների Եվրոպայի առաջնությունից առաջ:

«Առաջին անգամն է, որ Եվրոպայի առաջնության ենթախմբային առաջնություն ենք անցկացնում: Բարձր մակարդակի մրցաշար է, եւ մասնակից թիմերն էլ են բարձր որակավորման թիմեր: Ֆեդերացիան շատ է կարեւորում նմանատիպ մրցաշարի անցկացումը, քանի որ 2025 թվականին ունենք անցկացնելու բուն Եվրոպայի Մ17 տարեկանների առաջնությունը, որին կմասնակցեն 16 երկիրներ: Այս առաջնությամբ նախապատրաստվում ենք Մ17 տարեկանների Եվրոպայի առաջնությանը»,- ասաց Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Կարեն Ասմարյանը:

Վերջինիս խոսքով՝ ենթախմբային մրցաշարը հայ վոլեյբոլիստների համար մեծ փորձ կլինի, եւ դրան մասնակցելն արդեն իսկ ձեռքբերումների շարքին է դասվում:

«Մրցաշարի անցկացումը պատանիների եւ երիտասարդների համար նոր խթան կլինի այս մարզաձեւով զբաղվելու համար: 2020 թվականից մինչ օրս մարզաձեւով զբաղվողների թիվը կրկնապատկվել է»,-ասաց նա:

Երեւանի «Գազպրոմ Արմենիա» ուսումնական-մարզական համալիրում հուլիսի 21-23-ը ՀՀ կառավարության բարձր հովանու ներքո կանցկացվի վոլեյբոլի տղամարդկանց Եվրոպայի մինչեւ 22 տարեկանների առաջնության ենթախմբային մրցաշարը: Մրցաշարի մուտքն ազատ է:

Հայաստանի հավաքականը խաղերի օրերն են՝ հուլիսի 21՝ Հայաստան-Պորտուգալիա, հուլիսի 22՝ Հայաստան-Դանիա, հուլիսի 23՝ Հայաստան-Ֆրանսիա: Բոլոր խաղերը կմեկնարկեն ժամը 17:30-ին:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՊՍԺ-Ն՝ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն կմեկնի Ճապոնիա եւ կանցկացնի երեք ընկերական հանդիպում: Իսպանացի Լուիս Էնրիկեի գլխավորած թիմը հուլիսի 25-ին կմրցի Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի», հուլիսի 28-ին՝ ճապոնական «Սերեսո Օսակայի», օգոստոսի 1-ին՝ Միլանի «Ինտերի» հետ:

Փարիզյան ակումբը մրցաշրջագայությունից կստանա 20 միլիոն եվրո եկամուտ. հաղորդում է ֆրանսիական L'Equipe-ը:

Անցած տարի Ճապոնիայում անցկացրած մրցաշրջագայությունից ՊՍԺ-ն ստացել էր 12 միլիոն եվրո: Վերադարձին ՊՍԺ-ն կարող է նաեւ մեկ հանդիպում անցկացնել Հարավային Կորեայում՝ ապահովելով ավելի մեծ եկամուտ:

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ՝ ԸՍՏ ՌՈՆԱԼԴՈՒԻ

Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն վստահ է, որ հյուսիսամերիկյան ՄԼՍ-ի առաջնությունը խաղամակարդակով զիջում է Սաուդյան Արաբիայի առաջնությանը: «Սաուդյան լիգան ավելի լավն է, քան ՄԼՍ-ը: Ես 100 տոկոս վստահ եմ, որ չեմ վերադառնա որեւէ եվրոպական ակումբ: Ես բացեցի ճանապարհը Սաուդյան Արաբիայի լիգա, հիմա շատ խաղացողներ գալիս են այստեղ: Մեկ տարի հետո Սաուդյան Արաբիայի լիգան հետ կթողնի Թուրքիայի եւ Նիդերլանդների լիգաները»,- Ռոնալդուի խոսքը մեջբերում է alarabiya-ն: Ռոնալդուն «Ալ Նասրին» միացել է այս տարվա հունվարին, 16 խաղում խփել է 14 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

ԱԴԱՄՅԱՆԸ՝ ԳՈԼԻ ՀԵՂԻՆԱԿ

Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Սարգիս Ադամյանի գոլն օգնել է գերմանական «Քյոլնին» հաղթել ընկերական խաղում: Բունդեսլիգան ներկայացնող թիմը 45-րոպեանոց խաղում մրցել է լեհական «Գուռնիկ Զաբժեի» հետ ու հաղթել 3-1 հաշվով: 30-ամյա հայ ֆուտբոլիստը 11-րդ րոպեին բացել է խաղի հաշիվը: Հիշեցնենք, որ Սարգիս Ադամյանը «Քյոլնում» է 2022 թվականի հուլիսից եւ 32 պաշտոնական խաղում խփել է 2 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում: Transfermartk-ը հարձակվողի տրանսֆերային արժեքը գնահատում է 1 միլիոն եվրո:

ՄԵՍԻԻ ԴԻՏՎԱԾ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսիի շնորհանդեսն ամերիկյան «Ինտեր Մայամիում» ամբողջ աշխարհում հավաքել է 3,5 միլիարդ դիտում բոլոր հնարավոր մեդիա-հարթակներում. հաղորդում է SNS-ը:

Մեսիի շնորհանդեսն այս ցուցանիշով գերազանցել է Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի շնորհանդեսը Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրում»՝ 3 միլիարդ դիտում ամբողջ աշխարհում: Ռոնալդուն «Ալ Նասրին» միացել է այս տարվա հունվարին, 16 խաղում խփել է 14 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում: Լիոնել Մեսին նորամուտն ամերիկյան թիմում կարող է նշել այս ուրբաթ՝ հուլիսի 21-ին: Այդ օրը «Ինտեր Մայամին» Լիգաների գավաթի խաղարկության խաղում կմրցի մեքսիկական «Կրուս Ասուլի» հետ:

● Հունիսի 20-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Մերսեդես» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է տրվում մահվան վկայականը:

Սիլվա Բոյաջյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մահվան վկայական ստանալու համար հարկավոր է դիմել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ (ԶԱԳՍ) տարածքային բաժին եւ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1. մահվան վկայականը ստացողի անձնագիրը եւ պատճենը,
2. մահացածի անձնագիրը,
3. թաղամասային բժշկի կողմից տեղեկանք՝ մահվան մասին:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՔԿԱԳ բաժնի աշխատակցի կողմից տրվում է դիմումի ձեւ, որը պետք է լրացվի վկայական ստացողի կողմից:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գորիսում ինչպե՞ս կարող եմ ստանալ մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Աշոտ Նավասարդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի տարածքում մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայության թույլտվության համար անհրաժեշտ է դիմել քաղաքապետարան՝ Առեւտրի եւ սպասարկման բաժին:

ՀՀ Սյունիքի մարզպետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համապատասխան թույլտվությունը տրամադրվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հուլիսի 16-ի Վարդավառից հետո քաղաքն անմխիթար վիճակում է: «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, որ աղբը թափված է փողոցներով մեկ, իսկ Հանրապետության հրապարակի գլխավոր շատրվանների ջուրը կեղտի մեջ կորած է: Գլխավոր շատրվանների ջուրը փրփռած է, դեղնած, ամբողջությամբ ուտելիքի մնացորդներ են եւ կոնֆետի կամ սննդի թղթեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+5 + 10 +22 + 25
Կոտայքի լեռներ	+ 5 +10 +22 + 24
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+8 + 10 +16 + 20
Լոռի	+9 + 14 +20 + 24
Տավուշ	+14 + 18 +23 + 28
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 +21 + 23
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +25 + 29

Արարատ	+14 + 17 +30 + 32
Արմավիր	+12 + 14 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+16 + 20 +24 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+16 + 19 +24 + 27
Երեւան	+13 + 15 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*